ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 1-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի մարտի 31-ին ժամը 16:26:01-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի ապրիլի 1-ին ժամը 11:40-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Խնդրում ենք պարզաբանել հրավերի տեխնիկական բնութագրում ներառված հետևյալ պահանջի կիրառությունը.
«Աշխատանքների կատարման ավարտից հետո կատարողական ակտի հետ միասին կատարողը ներկայացնում է համապատասխան ծրագրային հավելվածից արտահանված հաշվետվություն, որում ըստ անտառտնտեսության մասնաճյուղերի պետք է արտացոլի՝
* թռիչքների քարտեզ-սխեմաները և սխեմատիկ հետագծերը՝ աշխարհագրական դիրքով,
* աշխատանքի ծավալները՝ հեկտարներով,
* ծախսված նյութը՝ լիտրերով»:
Մասնավորապես խնդրում ենք հստակեցնել՝
1.1 «Համապատասխան ծրագրային հավելված» ձևակերպմամբ ի՞նչ ծրագրային հավելված է նկատի առնվում՝ միայն այն ծրագրային միջավայրը, որով անմիջականորեն իրականացվել են թռիչքների և նյութի ցրման աշխատանքները, թե ցանկացած ծրագրային հավելված, որից հնարավոր է արտահանել հրավերով պահանջվող տվյալները:
1.2 Հրավերով պահանջվող հաշվետվությունը բավարար է ներկայացնել արտահանված վերջնական հաշվետվության ձևով, թե պատվիրատուի կողմից կարող է պահանջվել նաև սկզբնաղբյուր ծրագրային տվյալների դիտարկման կամ ստուգման հնարավորություն:
1.3 Հաշվետվության ներկայացման համար կա՞ նախապես սահմանված միասնական ձևաչափ կամ ֆայլային տեսակ, թե մասնակիցն ինքնուրույն է որոշում ներկայացման ձևաչափը՝ պայմանով, որ հրավերով պահանջվող տվյալները ամբողջությամբ արտացոլված լինեն:
Սույն պարզաբանումը խնդրում ենք տրամադրել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ծառայության հատկանիշները և բացառեն տարակերպ մեկնաբանությունը, ինչպես նաև նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, համաձայն որի հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

Պարզաբանում N 1: 1.1 Հաշվի առնելով, որ ծրագրային հավելվածի հղումը կսահմանափակեր հնարավոր մասնակիցների ներգրավվածությունը, ուստի ցանկացած ծրագրային հավելված, որից հնարավոր է անտահանել հրավերով պահանջվող տվյալները ընդունելի է:
1.2 Հաշվետվության ներկայացման պահանջները և պահանջվող տեղեկատվությունը ներկայացված են հրավերի տեխնիկական բնութագրով:
1.3 Հաշվի առնելով, որ նախապես սահմանված միասնական ձևաչափը կամ ֆայլային տեսակը կսահմանափակեր հնարավոր մասնակիցների ներգրավվածությունը, ուստի միասնական ձևաչափ կամ ֆայլային տեսակ սահմանված չէ:

Հարցադրում N 2: 2. Խնդրում ենք պարզաբանել հրավերի տեխնիկական բնութագրում ներառված հետևյալ պահանջի կիրառությունը.
«Մասնակիցը հայտով ներկայացնում է կոնկրետ այն տեխնիկական միջոցը (ները) և նրա արտադրական հնարավորությունները, որով պետք է մատուցվի ծառայությունը»:
Մասնավորապես խնդրում ենք հստակեցնել՝

2.1 Նշված պահանջի շրջանակում մասնակիցը պարտավո՞ր է հայտով նշել նաև յուրաքանչյուր տեխնիկական միջոցի քանակը, թե բավարար է ներկայացնել ծառայության մատուցման համար նախատեսվող տեխնիկական միջոցների տեսակները և դրանց հիման վրա ապահովվող ընդհանուր արտադրական հնարավորությունը:
2.2 Նշված պահանջը վերաբերում է մասնակցի կողմից ծառայության մատուցման համար նախատեսվող տեխնիկական լուծման նկարագրությա՞նը, թե հրավերով նաև պահանջվում է հայտի ներկայացման պահին արդեն առկա տեխնիկական միջոցների ամբողջական կազմի վերջնական նշում:
2.3 Եթե մասնակիցը հրավերով պահանջվող արտադրական կարողությունը հիմնավորում է ներկայացվող տեխնիկական միջոցների և դրանց հիման վրա ապահովվող ընդհանուր արտադրողականության հաշվարկով՝ առանց յուրաքանչյուր տեխնիկական միջոցի քանակի առանձին նշման, արդյո՞ք դա կհամարվի հրավերի նշված պահանջի պատշաճ կատարում:
Սույն պարզաբանումը խնդրում ենք տրամադրել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի հրավերով սահմանվում են մասնակցի որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի գնման առարկայի բնութագրերը պետք է բացառեն տարակերպ մեկնաբանությունը: Միաժամանակ նկատի ունենք նաև նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի մասնակիցը, անհրաժեշտության դեպքում, կարող է հիմնվել այլ անձանց տեխնիկական միջոցների վրա՝ համապատասխան իրավահարաբերության հիման վրա:

Միաժամանակ խնդրում ենք պարզաբանել՝
եթե հրավերի տեխնիկական բնութագրով մասնակիցներից պահանջվում է ներկայացնել ծառայության մատուցման համար նախատեսվող կոնկրետ տեխնիկական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն, ապա արդյո՞ք տվյալ պահանջը դիտարկվում է որպես մասնակցի տեխնիկական կարողություններին վերաբերող որակավորման պահանջ:
Եթե այո, ապա խնդրում ենք պարզաբանել նաև, թե այդ դեպքում ինչպես է կիրառվում որակավորման ապահովման պահանջը՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10.1 կետը, համաձայն որի որակավորման ապահովումը հրավերով սահմանվող որակավորման չափանիշներին փոխարինող ապահովման միջոց է:

Պարզաբանում N 2: **ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշներ (չափանիշ) չեն նախատեսվում:**
Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է կոնկրետ այն տեխնիկական միջոցը (ները) և նրա արտադրական հնարավորությունները, որով պետք է մատուցվի ծառայությունը» պահանջը կրում է տեղեկատվական բնույթ, անհրաժեշտ է պատվիրատուի աշխատանքների կազմակերպման համար, ինչը չի դիտարկվում մասնակցի տեխնիկական կարողություններին վերաբերող որակավորման պահանջ և մասնակիցը ներկայացնում է պահանջվող տեղեկատվությունը ազատ ոճով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով